ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 13/78709-25
«_____»_____2025թ.

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ
ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
(Էլ. հասցե՝ foi@foi.am)

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր 2025 թվականի հունիսի 17-ի հարցման՝ Երևանի բալետային միջազգային 3-րդ փառատոնի հետ կապված՝ տեղեկացնում եմ հետևյալի մասին.

1. Երևանի բալետային 3-րդ միջազգային փառատոնի (այսուհետ՝ Փառատոն) իրականացման ուղղությամբ կատարված ընդհանուր ծախսը կազմել է շուրջ 1003647100 ՀՀ դրամ:

Փառատոնն աննախադեպ էր ծավալներով և գեղարվեստական բովանդակությամբ: Փառատոնային օրերին Երևանը հայտնվել էր բալետային աշխարհի ուշադրության կենտրոնում, քանի որ Երևան էին ժամանել բալետային արվեստի ոլորտում աշխարհի 2 ամենաառաջատար թատրոնները՝ Մոսկվայի Բոլշոյ և Սանկտ Պետերբուրգի Մարիինյան թատրոնները, որոնք առաջին անգամ իրենց պատմության մեջ ելույթ ունեցան նման ձևաչափով՝ բալետային առաջատար կազմերով և նվագախմբերով՝ ներկայացնելով ամբողջական բալետային ստեղծագործություններ:

Փառատոնային օրերին արտերկրից ժամանած շուրջ 500 արտիստներ, բալետի պարողներ, նվագախմբերի երաժիշտներ, տեխնիկական, կազմակերպական, սպասարկող աշխատակիցներ եղան Երևանում, որոնք գոհունակությամբ մասնակցեցին աշխարհում ծավալներով և անցկացվող ձևաչափով նախադեպը չունեցող փառատոնին: Ընդհանուր առմամբ փառատոնի կազմակերպական աշխատանքներում ներգրավված էր շուրջ 800 մարդ, իսկ փառատոնային 5 օրերին ներկա էր շուրջ 100000 հանդիսատես:

2. Փառատոնի իրականացման համար կնքվել են ծառայությունների մատուցման պայմանագրեր՝ հետևյալ ծածկագրերով ՈԵՔ-ՄԱԾՁԲ-25/97, ՈԵՔ-ՄԱԾՁԲ-25/111, ՈԵՔ-ՄԱԾՁԲ-25/106 (նկարահանման ծառայություններ, որը ներառել է նաև «Հունիսի 1-ը օպերային աստղերի հետ» ծրագրի տեսանկարահանումը):

3. Փառատոնն իրականացվում է Երևանի քաղաքապետի նախաձեռնությամբ, 2023 թվականից, և փառատոնի ծրագրերի մշակման, կազմակերպման, լոգիստիկայի հետ կապված հարցերի կարգավորումն իրականացնում է Երևանի քաղաքապետարանը:

4. Հաշվի առնելով, որ հայցվող տեղեկատվությունը կարող է պարունակել կոմերցիոն գաղտնիք՝ Փառատոնին մասնակցություն ունեցած ստեղծագործական կազմակերպություններին հատկացված գումարի չափի մասին տեղեկատվությունը կարող ենք ներկայացնել լրացուցիչ՝ համապատասխան փոխհամաձայնեցումներից հետո:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Երևանի քաղաքապետարանը փառատոնի կազմակերպական աշխատանքների և իրականացման, մասնակից թատերախմբերի և ներկայացվող ստեղծագործությունների ընտրության, հատկացվող հոնորարների, լոգիստիկ խնդիրների կարգավորման մասով շուրջ 8 ամիս վարել է բանակցություններ համապատասխան կազմակերպությունների հետ:

5. Փառատոնի շրջանակներում ելույթ ունեցած բոլոր հաստատությունների արտիստների, նվագախմբերի, տեխնիկական, ստեղծագործական, կազմակերպական կազմերի կեցության, սննդի, ուղևորափոխադրման ծախսերն իրականացվել են բացառապես Երևան համայնքի միջոցների հաշվին՝ կնքված համապատասխան պայմանագրերի շրջանակներում:

6. Փառատոնի շրջանակներում իրականացվել են միայն բալետային թատերախմբերի ելույթներ, այլ մշակութային ծրագրեր կամ միջոցառումներ չեն իրականացվել:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՏՈՒՐԻԶՄԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ Ժ/Պ,
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

X_____

ԱՐԱՔՍԻ ԽՈՅԼՈՒՆՑ

Կատ.՝ Հ. Խաչիկյան
Մշակույթի և տուրիզմի վարչություն
հեռ. 011 514-214